հրամայել այդ բանը անել եւ ոչ էլ գիտէ, թէ հրդեհողը նորա մարդկանցից մէկն է։ Մի քանի դիշերներ անցնելուց յետոյ Անուշիրվան հրամայեց կրկնել նոյն բանը, ինչպէս առաջ. նորա հրամանը կատարեցին։ Թուրքը սկսեց բարձրաձայն բարկանալ այս վարմունքի վերայ, մինչեւ որ Անուշիրվան մեղմացաւ նորա հետ, ներողութիւն խնդրեց եւ հանդստացրեց նորան։ Ապա նա հրամայեց կրակ նետել իւր բանակի ծայրում, որտեղ ոչինչ չկար, բայց ի չոր կանաչից եւ թփից շինուած խրճիթներից։ Երբ լուսացաւ, բարկացաւ Անուշիրվան Թուրքի վերայ եւ ասաց՝ "քո մարդիկը քիչ էր մնացել որ բանակս բնաջինջ առնէին. կասկածիդ համար դու ինձանից վրէժ առար"։ Իսկ նա երդուեցաւ թէ՝ ճշմարիտ եսչգիտեմ, ինչ է եղածի պատճառը։ Անուշիրվան ասաց՝ "Եղբայր, մեր եւ քո զօրքը առում են մեր խաղաղութիւնը, որովհետեւ նոցա համար կարուեցաւ այն աւարը, որ նոքա կը ստանային իրանց աւազակային յարձակումներում եւ մեր մէջ եղած կռիւներում. ես ապահով չեմ, որ նոքա այնպիսի բան կ՝անեն, որ մեր սրտերը կը պաղեցնէ, մինչդեռ մենք միմեանց սէր եւ յարգանք ենք ցոյց տուած։ Որպէս զի աղդական եւ մտերիմ լինելուց յետոյ՝ մենք (դարձեալ) չթշնամանանք, ամենալաւն է, որ դու ինձ թոյլ տաս մի պարիսպ իմ եւ քո մէջ շինել, նորա վերայ մի դուռ կը կախեմ. այն ժամանակ ոչ իմ մարդիկը քո մօտ եւ ոչ քո մարդիկը ինձ մօտ ներս կը մտնին, բացի այն դէպքից, եթէ դու կամ ես թոյլ տանք"։ Թուրքը համաձայնեցաւ եւ գնաց իւր երկիրը, իսկ Անուշիրվան ձեռնարկեց պարսպի շինութեանն, որ շինեց ծովի կողմից ժայռից եւ արճիճից. նորա լայնութիւնն էր 300 կանգուն, իսկ բարձրութիւնն՝ լեռների կատարին հաւասար։[1]

---

1 Հարկաւ պարսպի մի մասը լեռան վերայ կը տարածուէր, ինչպէս կը նկարագրէ Խստախրի, տ. էջ 31։